

## ՏԵՂԵԿԱԼՔ

Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին ամենամսյա դրամական վճար տրամադրելու կարգում լրացում կատարելու անհրաժեշտության մասին

ՀՀ կառավարության՝ 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 2001-Լ որոշմամբ սահմանված միջոցառման շրջանակներում ամենամսյա դրամական վճարի ձևով աջակցություն է նախատեսվում Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին անդամների համար:

Նշված միջոցառման պահանջների իրագործման նպատակով ՀՀ կառավարությունը 2020 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 2180-Լ որոշմամբ հաստատել է Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին ամենամսյա դրամական վճար տրամադրելու կարգը:

Կարգի 2-րդ կետի կարգավորման համաձայն՝ ամենամսյա դրամական վճարը տրամադրվում է գտնվելու վայրն անհայտ զինծառայողի ամուսնուն և ծնողին (դրամական աջակցության շահառու):

Իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած քաղաքացիների հետ աշխատանքների ընթացքում ի հայտ են եկել առկա կարգավորման համաչափության հետ կապված խնդիրներ, որոնք նաև գործնականում հանգեցնում են խնդրահարույց իրավիճակների:

Մասնավորապես, հարցը կապված է աջակցության միջոցառման շահառուների խմբերը միջոցառման նպատակներին և խնդիրներին համահունչ չլինելուն:

Միջոցառման կարգավորումների ընդհանուր տրամաբանությունը ենթադրում է, որ պետության նպատակադրումը ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին մինչ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով հատուցումը տրամադրելն սոցիալական աջակցություն ցուցաբերելն է: Նշվածը պայմանավորված է զինծառայողի անհետ կորելու և նրա ընտանիքի անդամներին հատուցում տրամադրելու միջև ժամանակային մեծ խզմամբ, ինչն էլ իր հերթին բխում է օրենսդրական կարգավորումներից, որոնք անհայտ կորած զինծառայողի ընտանիքի անդամներին հատուցում տրամադրելը պայմանավորում են դատարանի կողմից զինծառայողին անհայտ բացակայող ճանաչելու որոշում կայացնելու հետ, որը որոշակի վարույթային գործողությունների իրականացման անհրաժեշտության հետևանքով ժամանակատարր գործընթաց է իրենից ներկայացնում: Այսինքն, խնդրո առարկա միջոցառման միջոցով պետությունը, ըստ էության, նպատակ ունի սոցիալական աջակցություն տրամադրել զինծառայողի անհայտ կորելու հետևանքով օրենքով սահմանված կարգով հատուցում ստանալու իրավունքն ունեցող նրա ընտանիքի անդամներին՝ հատուցում ստանալու շահառուներին:

Պետության վերը նկարագրված նպատակադրման մասին է, ի թիվս այլնի, վկայում աջակցությունը, Օրենքով սահմանված հատուցում տրամադրելու դեպքերի նման,

Չինժառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) միջոցով տրամադրելը, ինչպես նաև անհայտ կորած զինժառայողի՝ հիմնադրամի շահառու ճանաչվելու դեպքում ամենամսյա դրամական վճարի տրամադրումը դադարեցվելու կարգավորումները:

Այս համատեքստում, սակայն, հարկ է նկատել, որ Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զինժառայողի զոհվելու (մահանալու) կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում շահառու են համարվում, ոչ միայն զինժառայողի ամուսինը (1-ին կետ) և ծնողը (3-րդ կետ), այլև զավակը (2-րդ կետ) և հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան առկա ցերեկային ուսուցմամբ սովորող ուսանող քույրը և եղբայրը, ինչպես նաև զինժառայողի խնամքի տակ գտնված 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև 18 տարին լրանալը (4-րդ կետ): Ընդ որում, քույրը և եղբայրը համարվում են շահառու, եթե նրանց ծնողները կամ միակ ծնողը մահացած են կամ ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության առնվազն երրորդ աստիճանի սահմանափակում:

Ստացվում է, որ անհայտ կորած զինժառայողի զավակներին, ինչպես նաև քույրերին և եղբայրներին, որոնք համապատասխանում են Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի պահանջներին, ի տարբերություն՝ զինժառայողի ամուսնու և ծնողների, չի ցուցաբերվում որևէ աջակցություն, այն դեպքում, երբ նրանք հավասարապես իրավունք ունեն ստանալ հատուցում, Օրենքի կարգավորման ուժով հանդիսանում են շահառու:

Նշված տարբերակումն անհամաչափ է, չունի որևէ ողջամիտ հիմնավորում և չի բխում աջակցության միջոցառման ընդհանուր տրամաբանությունից և նպատակադրումից:

Ընդ որում, ինչպես արդեն նշվել է, առկա կարգավորումն արդեն խնդրահարույց իրավիճակներ է ստեղծել գործնականում: Այսպես, իրավական օգնություն ցուցաբերելու շրջանակներում հանդիպել են դեպքեր, երբ անհայտ կորած զինժառայողն ամուսնալուծված է, իսկ ծնողները՝ մահացած, ինչի հետևանքով նրա ընտանիքին, մասնավորապես՝ ամուսնու խնամքի տակ գտնվող անչափահաս զավակներին, որևէ աջակցություն չի ցուցաբերվում, քանի որ ընտանիքից որևէ մեկը միջոցառման շահառուի փաստացի չի հանդիսանում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ «Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձագերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինժառայողների ընտանիքներին ամենամսյա դրամական վճար տրամադրելու կարգում անհրաժեշտ է կատարել լրացում և միջոցառման շահառուների խմբում ընդգրկել նաև անհայտ կորած զինժառայողի զավակներին, ինչպես նաև Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի պահանջներին համապատասխանող քույրերին և եղբայրներին:

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատ